


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
 Գուլկարիոյ համար
 Տարեկան ֆրք. 10
 Վեցամսեայ " 5
 Արտասահման
 Տարեկան ֆրք. 12
 Վեցամսեայ " 6
 ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք ետ չեն
 տրուիր

Հարցե
 DIRAN PAPAIZIAN
 RUE DRAGOMAN
 K. STEPAN
 BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Երբ կ'ուզեի «Հայեղի»ին մէջ աղոտ երեւնալ,

Պարսիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

Իսայրաէլական դէպք մը

Վանէն յունուար 22 թուականով հեռուեալ քառամեացուցիչ լուրը կը հայտնուի:

«Տեղս գանուող կաթողիկ վարդապետներէն մէկը երկու օր առաջ ձերբակալուելով բանտարկուեցաւ, որովհետեւ հայ կիւն մը բռնաբարած էր օր ցորեկով՝ իրենց բացած մէկ մատուռին քովի կը, Պատիկ Մինասեանց տան մէջ, Յիշեալ վարդապետին նողկալի արարքը այնպիսի զայթակղութիւն մը առաջ բերաւ. որ անկարելի է նկարագրել»:

— Գուլկարիոյ այցելու հովիւ Պաղէեան Տ. Բարթողիմէոս վարդապետ Վառնայի ազգայնոց իրեն ըրած դիմումներուն վրայ միջնորդած էր կրօն. ժողովին որ Զամիսէ ի վեր փիլոնազրկութեան ենթարկուած Հիւրմիւզեան Տ. Գէորգ քահանային ներում շնորհուի, ըստ որում յիշեալ քահանան չուզեր եղեր Վառնայի մէջ մնալ: Ժողովը հարկ տեսաւ տեղեկանալ թէ յիշեալ քահանան Վառնայէն մեկնելէն ետքը ո՛ւր պիտի պաշտօնավարէ: Այո կէտը որոշուելէ ետքը միայն պարտ ու պատշաճը տնօրինել որոշուեցաւ:

— Ռուսճուգի համար ուսեալ և արժանաւոր քահանայ մը ուղուած էր. պատասխան տրուեցաւ թէ առ այժմ այդ տեսակ անպաշտօն քահանայ չի կայ և եթէ Ռուսճուգի մէջ արժանաւոր քահանայացու մը կը գտնուի, ներկայացնեն Պատրիարքարանի՝ քահանայ ձեռնադրելու համար:

— Պատրիարքարանի կողմէ: 50 ոսկի յատկացուած է իբր ճամբու ծախք խապայեան Տ. Սահակ եպիսկոպոսին որ Ասանա պիտի երթայ կաթողիկոսական ընտրութիւն կատարելու:

— Նպաստից յանձնաժողովը որոշեց 50 ոսկի յատկացնել Ուրֆայի եկեղեցիին վերաշինութեանը համար: Նոյնպէս որոշեց 10 հազարական օրինակ տրպագրել տալ Միացեալի Մայրենի Լեզուի Ա. Բ. տարիներէն:

— Բարիդի հայ Մատրան պաշտօնեայ Տ. Վառնապուհ քահանայ տեղւոյն Թաղական խորհուրդին հետ հանգոնակութեան ձեռնարկած է ի նպաստ որբոց և կարօտելոց:

— Բարիզէն կը գրեն թէ Ս. Պէլեանի Օբերայի թատերախումբը յառաջիկայ Յուլիանդէսի միջոցին Արեւ

ւելեան ներկայացումներ տալու համար պէտք եղած կարգադրութիւնները ըրեր ու հրամանը առեր է:

(ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱՔԵՐ)

Երկու շաբթի առաւօտ Երուսաղէմէն Պատրիարքարան հասած հեռագիր մ' կիմացնէ թէ, Խապայեան Սրբազան նոյն իրիկունը հասեր է Եաֆա, ուրիչ անմիջապէս Պէրոթ մեղներ է, հոն ալ կանգ չառնելով ճամբայ պիտի ելնէ դէպի Մէրոփն և հինգ շաբթի օրը հասնի Ատանա: Սրբազանը անմիջապէս պիտի ձեռնարկէ բնտրական գործողութեան, որպէս զի Զատկական տօներուն վերադառնայ Երուսաղէմ:

— Ի իկոմիգիոյ ազգայիններէն անցեալ շաբթու հանգուցեալ Տիար Յովհաննէս Միանեան՝ Ատաբազարի մէջ իր ունեցած բաւական ընդարձակ մէկ հողը իր կենդանութեան միջոցին կտակեր է Ազգ. Հիւանդանոցին:

— Ազն. Տիկին Աննա Էսաեան, անցեալ ուրբաթ հացկերոյթ մը տուեր է Ս. Յակոբայ որբանոցին մէջ պատուաբեալ որբերուն: Տիկինը՝ որուն կընկերանային իր հարսը՝ Տիկին Վահան Էսաեան և Կարապետ Էֆ. Էսաեան, նախ առաջնորդուեր է Հիւանդանոցի մատուռը, ուր Վարդան վարդապետ Բրոխորտեան աղօթեր է Էսաեան Յովհաննէս Էֆի ապաքինմանը առթիւ: Աղօթքի աւարտումէն ետքը, Որբանոցի բոլոր աշակերտները սեղոնատուն իջեր են, ինչպէս նաև Տիկիններն և Կարապետ Էֆ: Ի դէպ է յիշել թէ անցեալ կաղանդի օրերուն Տիկին Աննա Էսաեան նոյն հաստատութիւնը այցելելով, կաղանդի առթիւ բոլոր որբերուն զատ զատ դրամական նուէրներ ըրած է:

Այս հինգ շաբթի օրը տեղւոյս Ս. Եկեղեցոյ մէջ փայելուչ շքով կատարուեցաւ Վարդանանցի հանդէսը: Մինակ, եթէ զարմանալի բան մը կար, այն ալ ուսանողաց օտար լեզուով ալ երգ մը երգել տալն էր: Չուտ ազգային և կրօնական հանդէսներու մէջ օտար լեզուով չի երգուիր. այլ է պարզեւբառ խոստովանանք հանդէսը, այլ է Վարդանանցի հանդէսը:

Ն Ա Մ Ա Կ Ի Մ Բ Ա Գ Ր Ո Ի Ի Ե Ա Ն

... Խմբագիր,

Չորեքշաբթի օրուան «Իրաւունք»ի մէջ Պ. . . բաղաբէն զօրուած թղթակցութիւն մը կարգացիք, ի մասին ՉՑ սնտուկ գոյբերու անհետացմանը Աղգային շահերու անվթար պահպանման լրջօրէն նախանձախնդիր մի անհատ, ներկայիս կառաչարկեմ Պալքանեան ներկայացուցիչ Պարոնին, որ տեղի ունեցած սոյն խաչագողութեան և այդ առթիւ իր մասին եղած յայտնի ակնարկութեանց պէտք եղած բացատրութիւնը տալով, գայթակղեալ մտքերը բուժէ: Երբ ժողովուրդը թերթերու մէջ կը կարգայ թէ այսպիսի սոսկալի զեղծում մը գործուած է, իրաւունք կունենայ ամբաստանականներէն հրապարակաւ ալ բացատրութիւն պահանջելու:

Ազգը ամեն մարմինէ մեծ է, ու ամեն մարմին կամ անհատ, ինչ որ ալ ըլլայ, պարտաւոր է հրապարակաւ ազգին բացատրութիւն և գոհացում տալ, իրապարակաւ և յայտնի գործուած զեղծումի մը համար:

Կը յուսանք թէ Պալքանեան Պարոն Ներկայացուցիչը չպիտի վարանի պէտք եղած բացատրութիւնը տալու, ըսել չի տալու համար թէ «լուծութիւնը խոստովանութիւն է»:

Վանա, 1900 Տ. Բ.
Փետր. 17
Յ. Գ. — Ներկայէս օրինակ մ'ալ «Իրաւունք»ի զրկած եմ:

Երէկ, հինգ շաբթի Վարդանանց տօնին առթիւ Իրաւունքի խմբագրատունը, գոց էր, իսկ վաղը շաբաթ Պուլկարաց ալ տօն ըլլալով, բաղաբէս բոլոր տպարանները չեն բացուիր. հետեւաբար միայն ուրբաթ աւուր աշխատութեամբ կարելի չէր թերթ մը շարել ու տպագրել. ահա այս պատճառաւ Իրաւունք վաղը չի հրատարակուիր:

18 Փետր. 1900 Խմբ. «Իրաւունք»ի Վանա Յ. Գ.

Բարեկենդանի առթիւ Բոժոժիկի կողմէ եղած դիմակաբաշխութեան ցանկը տեղւոյ անձկութեան պատճառաւ յաջորդ թերթով

ԲՈԺՈՒԹԻԿԻ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ

Այս հինգշաբթի առաւօտից, Բոժոժիկ կանուխէն իր արգուզարզը տուած, Թաթիպշէ տուտուին փեսին բրածին պէս հանդերձավածսունէն ֆիւրայով սե Կօստիւմ մը հագած, ձեռքերը կանթեր ու գլուխն ալ սիլինտի գլխարկ մը դրած, Եէլ-տէյրմէնի հրապարակը երթալով, հոն նստապէս հրաւիրուած երկուսն ալ թեան մը ներկայութեանը օրուան հանգէսին առթիւ հետեեալ ատենախօսութիւնը կընէ:



Տեսարք և Տիկնայք

Գաղափարի մը համար ամենքնիս ալ այսօր օտար հողի մը վրայ Յէլտէյրմէնի մէջի մէջ կը գտնուինք: Ունեցած անօթութեան ու մերկութեանը չի նայելով, գաղափարի կուր մը զելու համար ամէն զոհողութեան յանձնառու եղալը՝ մեծ նկարագրի մը շողջողուն ապացոյցը տուած կըլլայ: Այսօրուան տօնին դիւցազնը եղող Վարդանն ալ նոյնպէս գաղափարի մը անմահ նահատակն է, որ իր արիւնովը Աւարայրի դաշտը շրեց ու այդ արեան շնորհիւ հոն գոյնղղոյն անթառամ՝ ծաղիկներ բուսան, որոնք տարիներու ընթացքին մէջ իսկ առանց չորնալու մինչև ներկայ սերունդին հասան, և մենք այսօր նոյն դաշտէն, որ իր անունը փոխելով Աւար-առի եղած է, տեսակ տեսակ կենդանի ծաղիկներ ունինք մեր ձեռքին տակ, զորս գողլայանքն պարտնու տիւշէր:

Ուրեմն ամենաանկեալ և աննախանձելի հայրենակիցներս, օգտուինք այս առաւելութիւններէն, զմեզ շրջապատող եօթը ութը տեսակ ալա քէյֆինէ գործիչներուն լապտերները միշտ վառ պահենք ու կռուինք մեր խաչագողական նիծեալ ու գատարկ գրպաններուն դէմ, որոնց ծակերէն աներեսաբար ներս սըպըրդած հովը զմեզ կը սարսուեցնէ:

Այո՛, ողորմելի եղբայրներս, պէտք է մերկանանք մեր ամեն զարգերէն, հրաժարինք ամեն սէրէ և մեր գրամները, հարիւրաւոր կարմրուկ ոսկիներ յանձնենք զգալուն ստամոքսներու, որոնք ՏՕՅԱ ՏՕՅԱ պիտի սնանին:

Տեսարք և Տիկնայք, մի՛ չև ե՛րբ հեծենք իբր ստրուկ և փողոցային արարածներ, հապօն, արժնանք, ելլենք, ալ ժամանակ է, զինուինք... իրար ըսպանելու համար, ճէլէճուլէներով խմբակներ կազմենք, մաքուր գործիչները վհատեցնելով... հրապարակէն փախընելու համար: Բանանք զ՛նքերու սընտուկները... Կառնապաթ բանայիրին ծախելու համար, արիարար արշաւենք Կէպի Պուքրէշ, բանայիրէն առածնիս հոն ցփութեան մէջ հերոսաբար մտնելու համար: (Կեդրոնէն ժախանարտի թիւն) մինչև ե՛րբ Կիլիկիա և Բարձր Հայք հեծեն զերութեան անտանելի շղթային տակ, ապստամբեցնենք Ձէյթունը, Նազարբէկեան անդուգական չիֆթին քանի մը հազար ոսկիներ տահա կըլլեցնելու համար: (Պուսփօ, պուսփօ) թող ազատի՛ Վասպուրական, և թափենք մեր արիւնը... Շարաֆ պէյլին քէչէ քիւլահը և կէճէլիք ոսկուֆան գնտակահար ծակծկելու համար: (Շաս շաւ, շաս շաւ) Յախուռն կիրքով, իրարու նախանձելով ու վերջը չի մտածելով մէկ քանի տեսակ ցոյցեր ընենք, հազարաւոր հոգիներ վայրագ գալաններուն ձեռքը անզէն և անպաշտպան ձգելով ճիճօզը դընելու համար: Ահ և սարսափ ազդենք մերիներուն, Վառնայի և Եգիպտոսի գերեզմանատանց մշջանոնցմէ խիստ շատերը գօրգու վէրէմիէն տեղաւորելու համար: Սպառնալիքով փարս բրցուններ, յանձնելով զայն Գեղարէմ և Ղեհօգի հերոսներու, որոնք Եւրոպական մայրաքաղաքներու մէջ իշխանական կեանքով պիտի ապրին, բանտերու մէջ հեծող ընկերներին անօթի մեղքնել տալու համար: Աւ մենք զրկեալ ու նախատեալ մնացորդքս, մեծ բարեկեանքանի հինգշաբթի օրով, ասանկ Եէլ-Տէյրմէնիին թէքէն անօթի ծարաւ բանդագուշելով պիտի անցունենք ժամանակնիս՝ երած սըրտերնուս չոր միթարանք մը տուած ըլլալու համար: (Երկարատեւ ժախանարտի թիւն):

(Շարունակելի)

ՄԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

Գ Ա Ն Գ Ա Տ

Ա.Ռ. Ս. Գ.

Ի՞նչ էի ես, ի՞նչ էիր դու,
 Ի՞նչ ըրիր զիս, ի՞նչ եղար,
 Երբ վիճակդ դնձ պատմեցիր՝
 Բոլոր անձրս կը գողար .
 Տառապանքդ դարձանելու
 Ուրիշ միջոց ձեռք չառի,
 Գարուն ծաղկիդ ընծայեցի
 Փափուկ սիրտըս զերթ թաղար :
 Սուտ վիշտերդ պատրաստեցին
 Գըլխուս երկաթէ վեղար,
 Փոխանակ քենէ խաբուելու՝
 Թող վըրաս կըրակ տեղար :

Խուշոս, Խուշիկս ըսելով
 Նախ զիս հըրապուրեցիր,
 Շինծու անմեղ ձևերովդ
 Հոգւոյս, մարմնոյս տիրեցիր .
 Վերջը անգութ, զիս լըքելով
 Հոգիս կըրակն այրեցիր,
 Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս խաբեցիր,
 Թէ որ զիս չի սիրեցիր :

Ես հոգւոյս չափ քեզ սիրեցի,
 Թերեւս քիչ մ'ալ աւելի,
 Զիս խաբելով դու մեծ մեղք մը
 Գործեցիր անքաւելի .
 Կը կարծէի որ քու հոգիդ
 Անձըդ, սիրտդ ցաւ է լի,
 Բացի աչքըս, աւանջ, տեսայ
 Որ չորս կողմըս գաւ է լի :

Ո՞վ Աստուած իմ, ի՞նչ հոգի կար,
 Այդ ծածկուած սրտիդ տակ,
 Անմեղութիւն թէ վատութիւն
 Թէ դժոխային մի յատակ,
 Դէմքդ սիրով, ժպի-ներով
 Զարգարուած տեսայ յատակ,
 Զէի կարծեմ որ միջոց են
 Ասոնք քաշելու ըստակ :
 Սուտ վիշտերդ պատրաստեցին
 Գըլխուս երկաթէ վեղար,
 Փոխանակ քենէ խաբուելու՝
 Թող վըրաս կըրակ տեղար :

Գաժան բաղդըս մինչև այսօր
 Անգըթարար զիս ատեց,
 Իժի ծընունդ, վատի մը ձեռք
 Բոլոր կեանքս արատեց .
 Սակայն Աստուած անշուշտ անօր
 Խըղճի խայթեր պատրաստեց,
 Որ մինչև վերջը պիտի քաշէ
 Ինչ որ սրտիս վ'րայ ցանեց :

Ռուսձուգ

* * *

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Պ. Մէլեիկովի զիւսը . — Մարդիկը
 Երիտասարդ՝ միևյեւ եօրանասուն տարե-
 կան եղած աճեցնելու . — Զիւր իցի՞ կըր-
 նայ ծառայել . — Միշտ այժոյ :

ՄՈՆԻԷԼԻԷ, 16 Փետր. 1900

Երկար ապրիլ. այս չէ՞ եղած մեր ա-
 մէնուս ալ փափաքը ամէն ատեն. որքան ալ
 յոռետես ըլլանք, որքան ալ կեանքի դժըն-
 դակ վայրկեաններու մէջ կեանքէն խորշինք,
 դարձեալ ամէն ատեն որ առիթը ներկայա-
 նայ՝ մէկզմէկու երկար կեանք կը մաղթենք .
 «Շատ ապրիսոյը օրհնենքնեցու մեծագոյնը
 չէ՞ միթէ : Ուստի բնական էր որ մարդիկ ա-
 մէն միջոց ի գործ դնէին սա կեանքը՝ այն-
 քան վաղանցիկ՝ քիչ մը երկարացնելու համար .
 ու շատեր, «անմահ մարդ» մը իսկ երազե-
 լու յաւորեցան : Յնորք, պիտի ըսէք . այո՛,
 բայց և այնպէս մարդկութիւնը կամ աւելի
 ճիշդ գիտութիւնը առաջին քայլ մը առած կը
 թուի այդ ծախուն մէջ, շնորհիւ Բասթէ-
 ռի աշակերտներուն : Պարոն Մէլեիկով՝ որ
 Բասթէօսի աշակերտներէն է, միջոց մը գը-
 տած է երկարացնելու եթէ ոչ կեանքը՝ գէթ
 երիտասարդութիւնը, ինչ որ ըստ իս աւելի
 մեծ կարեւորութիւն ունի . վասն զի ի՞նչ կ'ար-
 ժէ երկար ապրիլ, ապրիլ հարիւրաւոր տա-
 րիներ խորին ծերութեան մէջ, կիսամաշ մար-
 մին մը քաշըղկ այս ու անդի կեանքին մի-
 ջը որ ոչ այս աշխարհէն ըլլալ և ոչ միւսէն
 ու վերջապէս ի՞նչ փոյթ թէ դարեր պիտի
 ուրիւնք առանց . . . սիրուելու, և ի՞նչ կար-
 ժէ կեանքը առանց անոր : Ուստի լիովին պի-
 տի գնահատուի մեծանուն գիտնականին պիւ-

տը երբ յաջողութիւնը վերջնական ըլլայ, ու ոչն առնն քանի մը տասնեակ տարիներ ևս պիտի աւելնան մեր կորովի տարիքին վերայ եւ ո՞վ գիտէ, մինչև եթէ անասուն, ութսուն տարեկան հասակնիս պիտի կրնանք տանիլ մեր բոլոր ոյժերն ու կարողութիւնները. ու ո՞վ երջանկութիւն. . . սիրոյ ժամերնիս ալ երկար, անհամեմատ երկար պիտի տեսնն:

Ահա քանի մը իօսքով այդ նշանաւոր գիւտը. ամէնքս ալ գիտենք թէ մեր ամբողջ մարմինը բազկացած է խիստ պարզ տարրական բջիջներէ (արջիւղ). ջիղը իր բջիջը ունի, մկանը իրենը. ստամոքսը կազմող բջիջները տաքբեր են լեարդի բջիջներէն, ու սրբտի բջիջները՝ երկկամուների բջիջներէն: Բայց այս տարբերութիւնը կը կայանայ մինակ իրենց ձևին, մեծութեան. գիրքին մէջ. ամէնուն ալ տարրական նիւթը նոյնն է. ամէնքն ալ միևնոյն խմորէն շաղուուած են, ու այդ խմորը քրօթօրայւն կը գոչեն: Բայց ամէն հիւսուածք՝ չղային, մկանային, ևայլն բացի բջիջները՝ կը պարունակեն նաև ջրային հիւսուածք մը (թիսիւ Քիւրիո) որ տարիներու ընթացքին մէջ հետզհետեւ շատնալով՝ կ'ողողէ մեր մարմինն բոլոր գործարանները կազմող բջիջները ու կամաց կամաց կը խեղդէ, կ'ոչնչացնէ զանոնք:

Արդ, Մէշնիքօֆ այնպիսի շիճուկ մը (սեռիւն) գտած է որ պիտի զօրացնէ մարմինն բջիջները ու ասոնք պիտի կարենան դիմադրուել ջրային հիւսուածքները, յաղթող պիտի ելլեն այդ կեանքի ու մահուան պայքարէն և պիտի շարունակեն գործել կանոնաւոր կերպով:

* * *

Ուրիշ նորագոյն գիւտ մըն ալ բարեբաղդաբար կուգայ ջնջել շատ մը կանխահաս ծերութեանց գլխաւոր պատճառներէն մէկը. պարզականութիւնը ըսել կ'ուզեմ:

Բարոյագէտները վերջին ատեններս չեն գազրիր յայտարարելէ թէ մարդկութեան մեծագոյն թշնամին այբոյն է, վասն զի անոր հիմերուն հետ կը խաղայ. ու ստիպուով կը տեսնես անոր հսկայաբալլ ծաւալումը ամէն տեղ: Բոլոր երկիրներու մէջ բազմութիւնները թշնամիներ կազմուած են, որոնք այս կամ այն միջոցներով կը մաքաւին այդ համաճարակին դէմ. բայց ինչպէս կ'երեւայ, ամէնէն մեծ հարուածը գարձեալ գիտութիւնը պիտի տայ. և ահա թէ ինչպէս:

Ձիու մը ամէն օր բաւականաչափ ալքոլ կը խմցնեն. և ժամանակէ մը ետքը կենդանիին արիւնին մէջ շիճուկ մը կը շարժուի որ եթէ ուրիշ կենդանիի մը մէջ ներարկեն, այնուհետև ա՛յն աստիճան կը քարշի ալքոլէն որ աւելի լաւ կը համարի մեռնիլ ծարաւէ՛քան թէ կաթիլ մը ալքոլ խմել: Փորձը փայլուն արգիւնքներ ցուցուցած է այլ եւ այլ կենդանիներու վրայ: Օրինակի համար՝ ճագարի մը կերակուրին հետ ալքոլ կը խառնեն, ինչ որ շատ հաճելի կը թուի ու մեծ ախորժակով կը լափէ: Բայց վերև յիշուած շիճուկը ներարկելէ ետքը անասունը ալ երբէք չի մտնեար իր կերակուրին, ու վերջին ծայր զգուանք մը կը զգայ ալքոլէն: Մարգն ալ կը թուի թէ նոյն ազդեցութեան պիտի ենթարկուի ու քիչ ատենէն հակալքողական պատուաստին շնորհիւ՝ մարդկութեան մեծագոյն թշնամիներէն մէկը պիտի ոչնչանայ:

Իցի՛ւ թէ:

Ե. Ա.

Սեր ձիւնը. — Ստորին Աւստրիոյ Մէտուլէնի քաղաքին բնակիչները բոլորովին զարմացած տեսան թէ այս տարի ձմրան սկիզբներն իրենց քաղաքին մէջ տեղացող ձիւնը սև էր: Սոյն տարօրինակ ձիւնը քիչ մը աւելի մօտէն բնեցով տեսան թէ իւրաքանչիւր ձիւնի հաստիկ բազկացած էր սև լուերէ, որոնք կը ցատկուտէին: Անմիջապէս այդ ձիւնէն լեցուն կողով մը մասնագէտի մը զրկեցին, որ զայն բնեցել յետոյ պատասխանեց թէ այդ լուերը «ձիւնայու» կամ «սառայու» (բիւս տէ կլասիէ) կ'անուանուին ու յատուկ են Մօն Պլանի: Հաւանականաբար, սաստիկ հով մը զանոնք մինչև Աւստրիա քշած է:

Ծ Ի Ծ Ա Ղ

Ճամբորդ մը պանդուկ մը իջնելով լաւ մը կուտէ կը խմէ ու գիշերը հոն անցունելէ ետքը մեկնելու պահուն երբ պանդուկապետը հաշուեցուցակը կը ներկայացնէ իրեն. — Դրամ չունիմ — կըսէ:

Պանդակապետը — Բայց ինչո՞ւ երէկ իրիկուն չըսիք այդ բանը.

Ճամբորդը — Որպէս զի այս առաւօտ ձեզի անակնկալ մը ընեմ:

Վարժարանի մէջ

Մանկապարտիզպանուհին. — Պզտիկ Գեղամա, ըսէ՛ տեսնեմ, հինգ մէկ ալ ի՞նչ կընէ.

— Ինչո՞ւ չես պատասխաներ. օրինակի համար, քեզի հինգ թռչուն տըւած ըլլամ, ետքը հատ մըն ալ տալու ըլլամ նէ քանի՞ կընէ.

— Եօթը:

— Ի՞նչպէս եօթը.

— Որովհետեւ հատ մըն ալ տունը ունիմ:

Բժիշկը ու Յաճախորդը

Ներեցէք տէր բժիշկ, կէս գլխու սաստիկ ցաւ մը ունիմ, որուն պատճառը կարծր հակիթ մը ուտելս եղաւ:

— Սիրելիս, քանի քանի անգամներ խորհուրդ տուած եմ ձեզ զգուշանալ զժուարամարս ուտելիքներէ, մանաւանդ կարծր հակիթէ:

— Բայց ես չի կերայ, ստահակ մըն էր որ գլխուս իջեցուց այդ հակիթը:

Տէր եւ Ծառայ

Պարունին մէկը իր շարունակ դինով պտըտող սպասաւորին հարցուց.

— Պաթիւթ, մինչեւ ե՞րբ ասանկ գինով պիտի պտըտիս, հաւաստի եմ որ օր մ'ալ տանը ճամբան պիտի կորսնցընես ու փողոցը մնաս:

— Այդ մասին անհոգ եղիք տէրիմ, նախահոգութեամբ ձեր մէկ այցաքարտն ու տանը հասցէն գրպանս պահած եմ:

Թարգմ.

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Անցեալ թիւի հարցարանի մասին զըրկուած պատասխանները գոհացուցիչ չեն, որովհետեւ որհետ չեն. հետեւաբար զայն անգամ մըն ալ հետաքրքիրներու ու շագրութեանը կը յանձնենք



«Աշխարհիս մէջ ամենէն աւելի ընդհանրացած արհեստը ո՞րն է»:

Առաջին գիտցողին մէկ եռամսեայ «Հայելի» նուէր պիտի տրուի:

Զեփիֆ

Ծանօթ. — Նամակները գոց, հասցէները որոշ ու պահարանին վրայ պէտք է աւելցնել «Զեփիֆին յանձնելի»:

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ



ԷԼ

ալը

ՎԱՏ

ԷԷ

ԷԷԷ

ԷԷԷԷ

Է

Առաջին անխալ կարգացողին նուէրն է կատակերգութիւն մը:

Մ Ո Ւ Է Ռ

ԲՈՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ



(Շարունակութիւն)

Մանկ. — Այդ ալ կրնայ ըլլալ :
 Ծեր. — Դուն ի՞նչ կըսես :
 Մանկ. — Ես անկարելի է չեմ ըսեր :
 Ծեր. — Դուն իմ տեղս ըլլայիր ինչ կընէիր. ի՞նչ խրատ կուտաս որ ընեմ :
 Մանկ. — Ի՞նչ գիտնամ, ինչ որ կուզես :
 Ծեր. — Կը կատղիմ կոր :
 Մանկ. — Ես անպարտ եմ :
 Ծեր. — Ես հիմա քու ձայնդ փոխել կուտամ, Պ. փիլիսոփայ, (Մանկասարէ կը ծեծէ)
 Մանկ. — Վճռւյ, վճռւյ, վճռւյ, ա՛յ, ա՛յ :
 Ծեր. — Ասո՛ր մի փիլիսոփայութիւնդ :
 Մանկ. — Ատ ի՞նչ է. չե՞ս ամչնար :
 Ինձի պէս փիլիսոփան ծեծել կը յանդըզնին :
 Ծեր. — Պ. փիլիսոփայ, փոխեցէք եթէ կը կամօք այդ կերպ խօսիլը, ամէն բանի վրայ տարակուսելու է. պէտք չէ որ ըսես թէ ծեծեցի զքեզ. այլ կը կարծես թէ ծեծեցի :
 Մանկ. — Հիմա պիտի երթամ բողոքեմ :
 Ծեր. — Անպարտ եմ ես :
 Մանկ. — Նշանները դրած են :
 Ծեր. — Կրնայ ըլլալ :
 Մանկ. — Դուն ես զիս ասանկ ընողը :
 Ծեր. — Անկարելի բան չկայ :
 Մանկ. — Պիտի դատապարտուիտ :
 Ծեր. — Ո՞վ դիտէ, ի՞նչ կըլլայ :
 Մանկ. — Կեցիր դու : (Կերթայ)
 Ծեր. — (Միտակ) Այս ի՞նչ է, աս գարշելի մարդուն բերնէն այ հաստատ խօսք մը չկրցի առնուլ, նոր բան մը չսորվեցայ, ի՞նչ ընեմ չիտեմ, անհրկեր մը նայեր եմ. ինձի չափ շուարած մարդ եղած է արդեօք. բայց ահա՛ գնչունները կու գան, բազդս նայել տամ սրվոնց :
 (Գերասանուհիք մտնեն երգելով)
 «Պարոն Ծերուն տի կարգըլի,
 Եկէք ուսնը հերիսա,
 Զեռքն անոր՝ Ռուբէնիկին

Տայ սրտիկը Տօւիճա .
 Նա վարդ մի է դեռ նոր բացուած
 Ո՞վ չի սիրեր զայն հիմա,
 Պարոն Ծերուն թող զայն չըէ՛
 Անցնող դարձող հոտուրտա :»
 Ծեր. — Ի՞նչ նայեցէք, բազդս կը նայի՞ք :
 Ա. Դեր. — Հապա՛, ձեռքդ մեզի տուր մէջն ալ փարա մը, բազդդ ալ կը նայինք Քալդ ալ :
 Ծեր. — Առէ՛ք, ահա երկուքն ալ :
 Ա. Դեր. — Աղւոր դէմք մը ունիս, աղւոր :
 Բ. Դեր. — Որ կըսէ թէ բան մը պիտի ըլլաս :
 Ա. Դեր. — Քիչ ատենէն պիտի կարգըլիս պարոն, աղւոր կին մը պիտի առնես :
 Բ. Դեր. — Այո՛, կնիկ մը զոր ամեն մարդ պիտի շոյէ, ամեն մարդ պիտի սիրէ :
 Ա. Դեր. — Կին մը որ քեզի բարեկամներ պիտի բերէ, և տունդ բարիքներով լեցնէ :
 Բ. Դեր. — Անով մեծ անուն պիտի հանես :
 Դեր. — Ամենը քեզ մատով պիտի ցուցընեն :
 Ծեր. — Աղէկ, բայց ես ի՞նչ կըլլամ :
 Բ. Դեր. — Դուն, Կաւատ, այո՛, այո՛, (Եւ կը պարեն «Դուն կաւատ» գոչելով, յետոյ մեկնին)
 Ծեր. — (Միտակ) Կռողը տանի ասոնք, թշուառականները զիս տարակուսանքի մէջ թողուցին. պէտք է որ սա ամուսնութեանս տակէն ինչ ելլելիքը գիտնամ. երթամ նա մեծ մարդը գտնեմ որ բոլոր աշխարհք կը գովէ, եւ որ իր զարմանալի արհեստովը մարդու ուզածը կը ցուցնէ, բայց ինչո՞ւս պէտք, ահա ուզածս կը տեսնեմ կոր :
 ՏԵՍԻՒ Ե ✓
 Տօրիճա, Ռուբէնիկ, Ծերուն .
 (Տօրիճա և Ռուբէնիկ մէկ կողմ կենան առանց զԾերուն տեսնելու)
 Ռուբ. — Ի՞նչ. Տօրիճա, կատակէ՛, արգեօք :
 Տօր. — Ի՞նչ կատակ :

Ռուբ.— ճշմարիտ է որ կամուռնա-
նաս :

Տօռ.— Այո՛, ճշմարիտ է :

Ռուբ.— Բայց հարանիքդ ե՞րբ է :

Տօռ.— Այո իրիկուն :

Ռուբ.— Ուրեմն պնդութ, կը մոռ-
նաս քու վրադ ունեցած սէրս եւ տուած
խոստումներդ :

(Շար.)

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

«Գայլ Վահան» սղբերգութեան հան-
գուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը
յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը:
Գինն է 1 Փրանք: Կեդրոնատեղին Վառնա
Արևելեան տպարան: Օննիկ Բարսեղեան:



ՆԵՐՍԷՍ ԽԱԶԻԿԵԱՆ

և

ԼԵՒՈՆ ԱՃԷՄԵԱՆ

ՈՍԿԵՐԻՉ

Հայոց եկեղեցիին գիմացը, Վառնա:

Ոսկերչութեան վերաբերեալ ամեն
տեսակ յանձնարարութիւններ կը կա-
տարուին գոհացուցիչ պայմաններով .
արծաթի և ոսկիի վրայ ծաղկազիր փո-
րագրութիւններ, ինչպէս նաև շատ ձե-
ւով մատանիներ, օղեր և ապարանջան-
ներ կը պատրաստուին: Ամէն յաճա-
խորդներ արդէն գոհ մնացած են այս
երկու վարպետներէն :

ԱՉԴ

Ներկայ 1900ի մէջ հրատարակուելիք
«Վարդանանց պատերազմը կամ Վասակ Սիւ-
նի և Վարդան Մամիկոնեան» բնական դոր-
ծին տպագրութեանը գիւրութիւն մը տուած
ԸԼԼալու համար այժմէն բաժանորդագրու-
թիւն մը բացուած է . փափաքողները թող
հաճին իրենց հասցէները ու բաժնագինը
(2 Փր.) զրկել հեղինակին հասցէին .

Արտաշէս Կարապետեան (բօսթ ոէսս
թանգ) Շուվա :

Հրատարակութենէ վերջը սոյն գիրքը
պիտի ծախուի 2, 70 սանդիմի :

2—10



Հայկական սրճարան և ճաշարան,
ընթերցարան, պիլարտօ, կլկլակ եւ
ընտիր սիկարներ: Հաստատութիւնս
բաց է ամեն օր առաւօտեան ժամը
5էն մինչև 2: Երրորդ Ափսիւ թիւ 388:
28րդ զոփոցին մօտիկ ի Նիւ—Եօրք:

ՆՈՐ

Ա. ՉՄ Ա. Տ Ո Ւ Ն

Կ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆԻ



Սագալլը շէշմէ, աղջկանց կիմ-
նազիէի դէմը, Վառնա:

Ոսկեզօծ, կաշեկազմ, լաթակազմ և
թղթակազմ եւրէպական ճաշակաւ:

Դիւրամտոչելի գիներ: Կը պատրաստէ
նաև վաճառականական տոմարներ եւ
դպրոցական տետրակներ:

Отговорникъ М. Сконовъ
Печальница „Взаимность“ — Варна.